ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ

*Հովհ. Թումանյանի Թանգարան*

ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎՄՈՒՏՔ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

*Հովհաննես Թումանյան*

# ԱՐՁԱԿ

*երկրորդ հրատարակություն*

ԵՐԵՎԱՆ
2015

ՀՏԴ821319-3 Թումանյան
ԳՄԴ 84 (5Հ)-4
Թ 949

Կազմեց Նարինե Թուխիկյան-Խաչատուրյանը
Խմբագիր՝ բ.գ.թ. Անի Եղիազարյան
Գեղարվեստական ձևավորումը՝ Հելեն Երեմյանի

Թ 949 Հովհաննես Թումանյան. Մտքեր/ Հովհ. Թումանյանի թանգ; Կազմ.՝ Ն. Թուխիկյան-Խաչատուրյան; Խմբ.՝ Ա. Եղիազարյան։ Եր.: Հովհ. Թումանյանի թանգ., 2015։ – 592 էջ (Արևելք-Արևմուտք մատենաշար)։

*Գրքում ի մի են բերված Հովհ. Թումանյանի տարբեր հոդվածներում, ելույթներում, նամակներում արտահայտած խորիմաստ մտքերը և այս կամ այն երևույթի դիպուկ բնորոշումները։ Գրողի արած դիտարկումները արվեստի, բարոյականության, հայի որակների, ազգային և պետական հարցերի, կրթության և ուսուցչի, Շեքսպիրի, Սերվանտեսի, Սայաթ-Նովայի, ընդհանրապես մարդու, կյանքի փիլիսոփայական ընկալման, թուրքի և այլնի վերաբերյալ չափազանց հետաքրքիր են և այժմեական։ Թումանյանի հրապարակագրական և նամակագրական ժառանգությունից ընտրված են մտքի այն գոհարները, որոնք ամբողջական և հասկանալի են նաև իրենց բուն համատեքստից դուրս։*

*Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանի համար։*

ՀՏԴ 821.19-3
ԳՄԴ 84 (5Հ)-4

ISBN 978-9939-858-05-0

© Հովհ. Թումանյանի թանգարան, 2015

# ՄԻՏՔԸ

*Նվիրվում է* ՅՈՒՆԵՍԿՕ*-ի կողմից Գրքի*
*համաշխարհային մայրաքաղաք հռչակված Երևանին՝*
*ցանկությամբ, որ մեր հասարակության մեջ*
ԳԻՐՔԸ *դառնա ամենապահանջվածը:*

# ՄԻՆՉԵՎ ՄՏՔԵՐԻ ՄԵՋ ԸՆԿՆԵԼԸ...

Թումանյանը չի ստեղծել աֆորիզմներ և մաքսիմներ: Սակայն նրա հրապարակագրական, գրական և նամակագրական ժառանգությունը լեցուն են կյանքի, արվեստի, մարդու, աշխարհաքաղաքացու, ժողովուրդների և կառավարությունների մասին իմաստուն, փիլիսոփայական մտքերով: Դրանք համաշխարհային մշակույթի անբաժան մաս են: Թումանյանի՝ հատկապես մեզ, մեր ազգային որակների և ձգտումների բնորոշումները հաճախ ցավոտ են, դառը, բայց սրտացավությամբ և իր ժողովրդի ու հայրենիքի հանդեպ սիրով տոգորված: Թումանյանի հավատամքը ճշմարտությունն է: Այն իմանալով, նրա «աչքերի մեջ նայելով» միայն կարելի է թոթափել կյանքի կամ ճակատագրի շեղումները, ելքեր գտնել վերածնվելու: Մի բարդ, սակայն այլընտրանք չունեցող ճանապարհ թե անհատի, թե ազգի համար: Սա այն նույն մեթոդն է, որ առաջարկվել է Խորենացու և Նարեկացու կողմից: Անվախ նայել մեր ներսը, տեսնել մեր հոգերի և մտքերի իրական որակները և կամենալ մաքրվել: «Ներսից է լինելու հաստատ մեր փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»:

Թումանյանի ՄՏՔԵՐԸ ապշելու չափ արդիական են: Ուրեմն Թումանյանը պայծառատե՞ս էր, որ մոտ 100 տարվա հեռվից տեսել էր այսօրը, թե՞ մենք ենք քարացած: Եվ մեկը, և մյուսը:

Գրողի հոդվածներից, ելույթներից, նամակներից և այլոց հուշերից հավաքված ՄՏՔԵՐԸ թող օգնեն մեզ վերափոխվել: ՄՏՔԵՐ-ի ժամանակագրությանը հետևելով կտեսնենք Թումանյանի մեջ կատարվող կենսափիլիսոփայական և աշխարհայացքային գործընթացները: Չէ որ Թումանյանի ՄԻՏՔԸ անընդհատ շարժման, ընթացքի, ալացքի մեջ էր և պայմանավորված էր լինելիության հարցի երկրային և երկնային բնույթով:

ՄԻՏՔԸ կաշկանդում չի սիրում: Բայց մենք ԴՐԱՆՔ «կաշկանդել ենք» բաժիններում հեշտացնելու ընթերցողի գործը: Որոշ դեպքերում կարելի է և չհամաձայնել ՄՏՔԵՐԻ մեր դասակարգմանը: Գուցե ըստ Ձեզ այս կամ այն ՄԻՏՔԸ ճիշտ կլիներ զետեղել մեկ այլ բաժնում: Եվ Դուք իրավացի կլինեք: Բայց իրականում բոլորովին կապ չունի, թե ինչ բաժնում է ԱՅՆ, կարևորը, թե մենք ինչ ենք հասկանում ԱՅՆ կարդալով:

Ն. Խաչատուրյան



1869–1923

Ավանդույթը սուրբ և անշփոթ պահելու համար անհրաժեշտ են երկրի ամուր դիրք և ժողովրդի խաղաղ կյանք...

Մի ավանդություն
1887

Խոսքը, նայած, թե ինչ մարդուց ում է ուղղված, ամենազորեղ բժիշկն է։

Նամակ Անուշավան Աբովյանին
1890

## *Կյանքը գաղտնիքներ պահելու սովորություն չունի:*

*Ուսման անառակ զավակներ*
1890-*ական*

*Ասածուց հետո միայն բանաստեղծն է, որ ստեղծում է:*



*Գրողի նամակները*
**1890**-*ական*